ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ՀՀ- ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-12/3-2.27>>

<<22>> հոկտեմբեր 2012թ

ք. Աշտարակ

<< ՀՀ Արագածոտնի մարզպետարանը >>-ը, ի դեմս Ս.Սահակյանի, որը գործում է <<մարզպետարան>> կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ>> -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն. Սահակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ագարակավան համայնքի մշակույթի տան վերանորոգման>> աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ <<2012թ. դեկտեմբերի 20-ը >>:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները: Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված երեք հարյուր վաթսունհինգ օրը (առնվազն 365 օրացուցային օր): Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են սույն պայմանագրի N – Հավելվածում**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանած ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. Աշխատանքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն, Հավելված N 4) ստորագրմամբ:

Աշխատանքի կատարման պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) **մինչև պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը *(իսկ փարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարումը)*:**

4.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել

պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. Աշխատանքի գինը և վարձատրությունը

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում *31 193. 600* (երեսունմեկ միլիոն մեկ հարյուր իննսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որից 5 198 933 (հինգ միլիոն մեկ հարյուր իննսունութ հազար ինը հարյուր երեսուներեք ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.1.1 Պայմանագրի գնից՝ 20 տոկոսը՝ 6 238 720 (վեց միլիոն երկու հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր քսան)ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2012թ. դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ.

2) Կապալառուն է պատասխանատվություն կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավորությունների համար:

8.5 . Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.7 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 1 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.8 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կապալառու
<< ՀՀ Արագածոտնի մարզպետարան	<< ԵՍ ԵՎ ՆԱ» ԱՓԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4 >>	ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Պ.Սևակի 11
<<Աշտարակի ՏԳԲ>>	<< Ակբա կրեդիտ Ագրիկոլ բանկ >> ՓԲԸ Արագածոտն Մ/Ճ
Հ/Հ h/h 900441041229 ՀՎՀՀ 05004247	Հ/Հ h/h 220043331127000 ՀՎՀՀ 05204081
Ս. Սահակյան ---------------------- (ստորագրություն)	Ն.Սահակյան ---------------------- (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 4
<< 22 >> հոկտեմբերի 2012 թ. .
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ՀՀ- ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-12/3-2.27 >> գնման պայմանագրի

Կապալառու

_____
_____
_____
հասցե_____
հհ_____
_____
հվհհ_____

Պատվիրատու

_____
_____
_____
հասցե _____
հհ_____
_____
հվհհ_____

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<_____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ----------

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<_____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի համարը՝_____.

Պատվիրատուն՝ ի դեմս_____և կապալառու՝ ի դեմս_____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ <<___>> <<_____>> 20 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N_____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված նախագծանախահաշվային փաստաթղթերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն <<__>> <<_____>> 20 թ–ից <<___>> <<_____>> 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար ՀՀ դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
Ընդամենը	----------	----------		---------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
(ստորագրություն)
ազգանուն _____
Կ.Տ

Աշխատանքը ընդունեց
(ստորագրություն)
ազգանուն _____
Կ.Տ

Հավելված թիվ 1
<< 22 >> հոկտեմբերի 2012 թ. .
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ՀՀ-ԱՄՐԱՀ-ԱՇՁԲ-12/3-2.27 >> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

<< Ագարակավան համայնքի մշակույթի տան վերանորոգման >> **աշխատանքների կատարման**

Աշխատանքի		ՔԱ-	Միավորի	Ընդա-
նկարագիր	Չ/մ	ՆԱԿ	արժեքը	մենը
2	3	4	5	6
1,Քանդման աշխատանքներ				
Տանիքի ծածկի քանդում ասբոշիֆերից	100 մ^2	9.70	100,0	970,0
Տանիքի փայտանյութի քանդում	մ^3	13.00	20,0	260,0
Տանիքի փայտանյութի քանդում	մ^3	1.53	20,0	30,6
Ջրհորդանի քանդում մետաղական թիթեղից	100 մ^2	1.030	100,0	103,0
Ջրհորդանի փայտանյութի քանդում	մ^3	4.20	10,0	42,0
Փայտե պատուհանների քանդում	100 մ^2	0.225	100,0	22,5
Փայտե դռների քանդում	100 մ^2	0.0414	100,0	4,14
Առաստաղի գաջի սավաղի քանդում	100 մ^2	0.6970	50,0	34,97
Պատերի գաջի սավաղի քանդում	100 մ^2	3.0460	50,0	152,3
Շին.աղբի բարձում ինքնաթին.	տն	12.00	5,0	60,0
Շին.աղբի Տեղափոխում 3կմ	տն	12.00	5,0	60,0
Գոյ. ունեցող բետոնե հեծանների քանդում	մ^3	2.6	10,0	26,0
Շին.աղբի բարձում ինքնաթին.	տն	4.70	5,0	23,5
Շին.աղբի Տեղափոխում 3կմ	տն	4.70	5,0	23,5
Շին.աղբի բարձում ինքնաթին. /շենքի դիմաց/	տն	885.40	1,0	885,4
/գոյ.ունեցող/				
Շին.աղբի Տեղափոխում 3կմ	տն	885.40	1,0	885,4
Շին.աղբի բարձում ինքնաթին.	տն	17.50	5,0	87,5
Շին.աղբի Տեղափոխում 3կմ	տն	17.50	5,0	87,5
2,Տանիք				
Ծպեղնատոտքի տեղադրում	մ^3	12.49	150,0	1873,5
(մարթակ,կանգն,մաուերլատ,թեքան)				
Ծպեղնատոտքի տեղադրում	մ^3	1.53	20,0	30,6
(մարթակ,կանգն,մաուերլատ,թեքան)				
/առանց փայտի արժեքի/				
Տանիքի պրոֆիլավոր ցինկապատ մե-	100 մ^2	9.650	4,0	3860,0
տաղաթիթեղ ԿՊ -21- 0,5 մմ				
ԿավարամածՏ0 մմ հաստ	մ^3	3.48	150,0	522,0
Կավարամածի խտացում	մ^3	1.88	150	282,0
Ջրհորդանի կառուցում	100մ	1.895	400,0	758,0
ցինկապատ թիթեղից				
Տախտակ ջրհորդանի 50 մմ հաստ	մ^3	8.05	150,0	1207,5

Ջրթափ խողովակ	մ	95.0	1,0	95,0
Ջագար	հատ	14.0	3,0	42,0
Ծունկեր	հատ	16.0	1,0	16,0
Գազաթնագծի կառուցում g/թիթեղից	100մ^2	0.272	300,0	81,6
0,5 մմ				
Հոսանոցի կառուցում g/թիթեղից	100մ^2	0.072	300,0	21,6
0,5 մմ				
Փայտե կարկասի հակահրդե	մ^3	29.8	3,0	89,4
հային լաքապատում				
Կավարամածի հակահրդեհային	100 մ^2	9.65	10,0	96,5
լաքապատում				
Ջեղնալուսամուտի տեղադրում	հատ	4.0	10,0	40,0
Ամրան /ճարմանդ/	տն	0.0380	400,0	15,2
Կցումներ g/թիթեղից մինչև լայնութ.- 0.7մ	մ	42.4	1,0	42,4
Ե/բ միաձույլ գոտու կառուցում	մ^3	0.17	40,0	6,8
Վ-15 բետոնից				
Ամրան Ա-1	տն	0.0028	400,0	1,12
Ամրան Ա-3	տն	0.0075	400,0	3,0
Բեմահարթակի տանիքի հատվածի երեսպա	100 մ^2	1.270	400,0	500,0
պատում պրոֆիլավոր մետաղաթիթեղ				
ԿՊ -21- 0,5 մմ				
ԿավարամածՏ0 մմ հաստ	մ^3	0.95	150	142,5
Անցքերի գայլիկոնում	100ան ցք	1.73	30,0	51,9
370 մմ խորությամբ				
Անցքերի ցեմենտացում	մ^3	0.017	100,0	1,7
Խարիսխի տեղադրում անցքերում / Ա-2/	տն	0.1037	400,0	41,48
Անկյունակ 100*8	կգ	138.4	0,4	55,36
Որմնափայտի,ծպեղնատոքի ամրակապում	կգ	58.0	0,4	23,2
3.Բացվածքներ				
Ալյումինե դռան տեղադրում 60 մմ հաստ	մ^2	14.58	40,0	583,2
(օտարերկրյա. պրոֆիլ, սպիտակ գույն)				
Մետաղապլաստե դռան տեղադրում 60 մմ հաստ	մ^2	4.72	30,0	141,6
(օտարերկրյա. պրոֆիլ, սպիտակ գույն)				
Մետաղապլաստե պատուհանների տեղադ-	մ^2	3.75	25,0	93,75
րում /բացվող/ (օտարերկրյա.պրոֆիլ,սպիտակ)				
60 մմ հաստ4+4 մմ				
Մետաղապլաստե պատուհանների տեղադ-	մ^2	18.75	20,0	375
րում /չբացվող/(օտարերկրյա.պրոֆիլ,սպիտակ)				
60 մմ հաստ4+4 մմ				
Պատերի շարվածք կանոնավոր ձևի	մ^3	6.90	20,0	138,0
տուֆ քարով				
Խարիսխի տեղադրում անցքերում / Ա-2/	տն	0.0138	400,0	5,42
Ամրան Ա-1	տն	0.0621	400,0	24,84
Պատերի թափված հատվածների շարում	մ^2	4.50	10,0	45,0
սրբատաշ տուֆից				
4.Հարդարման աշխատանքներ				
Արտաքին պատուհանագոգերի արցուն	100մ	0.150	50,0	7,5
քաթափրի տակ g/ավազային սվաղ				
Պատերի սվաղում գաջի շաղախով	100 մ^2	3.413	200,0	682,6
բարելված որակի				
Առաստաղի երեսասվաղ գաջի շաղախով	100 մ^2	0.697	100,0	69,7
Շեպերի սվաղում գաջի շաղախով	100 մ^2	0.425	200,0	85,0
Շեպերի յուղաներկում	100մ^2	0.425	100,0	42,5
Պատերի ներկում լատեքսով	100 մ^2	3.500	250,0	87,5
բարելված որակի/super -L ՇԵՆ/				
Առաստաղների ներկում լատեքսով	100 մ^2	0.697	300,0	209,1
բարելված որակի/super -L ՇԵՆ/				
Կախովի առաստաղի իրականացում	մ^2	196.0	7,0	1372,0

հիմնակմախքով,Amstrong պլաստմասե				
մետաղական պրոֆիլների վրա				
Առաստաղի մոնտաժման աշխատանքների	100 մ^2	1.800	200,0	360,0
համար տախտակամածի կառուցում				
Բացվածքի երեսապատում ջրա-	100 մ^2	0.087	400,0	34,8
դիմացկուն գիպսակ,մետ. կարկասի				
կառուցումով				
5.Հատակներ				
Հատակների տակ բնահողի հանվածք	մ^3	21.3	5,0	106,5
Ավելորդ բնահողի բարձում ինքնաթ.էքսկավատորով	1000մ^3	0.021	1000,0	21,0
Տեղափոխում 3 կմ	տն	34.1	5,0	170,5
Հատակների տակ ավազակոպիճի լիցք	մ^3	57.2	10,0	572,0
տոփանումով				
Բնահողի տոփանում խճով	100մ^2	2.650	100,0	265,0
Բետոնե նախաշերտի կառուցում 80մմ	մ^3	21.20	40,0	848,0
Ց/ավազային հարթեցուցիչ շերտ	100 մ^2	2.650	300,0	795,0
30մմ հաստ.				
2	3	4	5	6
Հատակների կառուցում սալիկներից	100 մ^2	2.650	750.0	1987,5
/Մամլոգրանիտե սալ 40*40 իրանական/				
Մամլոգրանիտե շրիշակների	100մ^2	0.0720	700.0	50,4
կառուցում H=10սմ				
6.Սալվածք /հարթակ/				
3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	5.37	3,0	16,11
Բնահողի տոփանում խճով	100մ^2	0.537	100,0	53,7
Բետոնե սալվածք 100մմ հաստությամբ	մ^3	5.37	30,0	161,1
Ամրանային ցանց տեղադրում 100*100 - 4 մմ	100մ^2	0.5370	20,0	10,74
Ց/ավազային հարթեցուցիչ շերտ	100 մ^2	0.537	200,0	107,4
30մմ հաստ.				
Ներքին էլեկտրամատակարարում				
Պատի լուսատուի տեղադրում	հատ	2.0	2,5	5,0
շիկացման լամպով ՆԲՕ 21-2*60				
Առաստաղային լուսատուի տեղադրում	հատ	54.0	6,0	324,0
էկոնոմ լամպով /կետային/				
Երկբևեռ վարդակ ՍԻ~220Վ,Iõñò=6Ա	հատ	9.0	1,0	9,0
էլեկտրական անջատիչ միաստեղ միաբևեռ	հատ	4.0	1,0	4,0
էլեկտրական անջատիչ երկստեղ միաբևեռ	հատ	4.0	1,0	4,0
Տուփ բաժանարար	100հտ	0.18	30,0	5,4
Տուփ վարդակների և անջատիչների	100հտ	0.17	30,0	5,1
Հաղորդալարի անցկացում ՊՎ 1*2.5մմ^2	100 մ	2.70	15,0	40,5
Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 2*2.5մմ^2	100 մ	1.30	20,0	26,0
Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 3*2.5մմ^2	100 մ	2.25	25,0	56,25
Պլաստմասե ճկախողովակ. d =16մմ	100 մ	2.90	10,0	29,0
Պլաստմասե ճկախողովակ. d =32մմ	100 մ	0.10	15,0	1,5
Ակոսների փորում 20*15	100մ	0.595	20,0	12,0
Ակոսագծերի գաջի սավաղում	100մ^2	0.03	200,0	6,0
Լուսավորության խմբային վահանակ 12 խմբով, կազմված՝				
Խմբային վահան /պլաստմասե արկղ/1մոդուլ	հտ	1	10,0	10,0
Խմբային վահան /պլաստմասե արկղ/4մոդուլ	հտ	1	10,0	10,0
Երկբևեռ ավտոմատ անջատիչ 32Ա/ֆրանս/	հտ	1	20,0	20,0
Միաբևեռ ավտոմատ անջատիչ 10 Ա/ֆրանս/	հտ	4	10,0	10,0
Ուժային սարքեր				
4-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով	1000մ^3	0.0990	100,0	9,9
4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	1.70	5,0	8,5
Նախապատ. շերտ ավազից	մ^3	1.7	5,0	8,5
բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	9.9	2,0	19,8
Ավելորդ բնահողի բարձում	1000մ	0.0017	500,0	6,85

ինքնաթ.էքսկավատորով	3			
Տեղափոխում 3 կմ	տն	2.72	5,0	13,6
Ասբոցեմենտե խողով. տեղադ. d=100մմ	մ	33.0	1,0	33,0
Հողակցում անկյունակից 50* 50*4 - 6 մ	10հտ	0.10	50,0	5,0
Հողակցում շերտ.պողպ. - 40*4 մմ	100մ	0.10	20,0	2,0
Մալուխի տեղադրում 2*16 մմ² ԱՎՎԳ	100մ	0.55	200,0	110,0
Ընդամենը				24756,83
Շահույթ 5%				1237,84
Ընդամենը				25994,67
ԱԱՀ 20%				5198,93
Ընդամենը				31193,6
Ընդամենը երեսունմեկ միլիոն մեկ հարյուր ինսուն երեք հազար վեց հարյուր դրամ ներառյալ ԱԱՀ-ը:				

Պատվիրատու

Պատվիրատու

<< ՀՀ Արագածոտնի մարզպետարան

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4 >>

<<Աշտարակի ՏԳԲ>>

Հ/Հ h/h 900441041226 ՀՎՀՀ 05004247

Ս. Սահակյան ---------------

(ստորագրություն)

Կ.Տ

Կապալառու

<< [illegible] >>

ՀՀ Արագածո[illegible] 11

<< Ակբա կրեդիտ [illegible] Արագածոտն Մ/Ճ

Հ/Հ h/h 220[illegible] 05204081

Ն.Սահակյան ---------------

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 2

<< 22 >> հոկտեմբերի 2012 թ.

կնքված աշխատանքների կատարման

թիվ << ՀՀ- ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-12/3-2.27 >> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

<< Ագարակավան համայնքի մշակույթի տան վերանորոգման >> **աշխատանքների կատարման**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների Անվանումներ	Ծավալը (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը

1	Ագարակավան համայնքի մշակույթի տան վերանորոգման աշխատանքներ	***31 193 600***	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	20.12.12թ.
2	**ԸՆԴԱՄԵՆԸ**	***31 193 600***	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	20.12.12թ.

Պատվիրատու

<< ՀՀ Արագածոտնի մարզպետարան

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4 >>

<<Աշտարակի ՏԳԲ>>

Հ/Հ h/h 900441041226 ՀՎՀՀ 05604247

Ս. Սահակյան ------------------

(ստորագրություն)

Կ.Տ

Կապալառու

<< ԵՍ ԵՎ ՆԱ >> ՍՊԸ

ՀՀ Արագածոտնի [illegible] Պ.Մևակի 11

<< Ակբա կրեդիտ Ագրիկոլ բանկ >> ՓԲԸ Արագածոտն Մ/Ճ

Հ/Հ h/h 2200433311270001 ՀՎՀՀ 05204081

Ն.Սահակյան ------------------

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 3
<< 22 >> հոկտեմբերի 2012 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ<< ՀՀ- ԱՄ-ԲԸ[illegible]Հ- ԱՇՁԲ-12/3-2.27 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազար ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2012 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	<< Ագարակավան համայնքի մշակույթի տան վերանորոգման աշխատանքներ >>	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	31 193600	31 193 600	31 193 600	31 193 600

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

Պատվիրատու
<< ՀՀ Արագածոտի մարզպետարան
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4 >>
<<Աշտարակի ՏԳԲ>>
Հ/Հ h/h 900441041226 ՀՎՀՀ 05004247
Ս. Սահակյան ____________
(ստորագրություն)

Կապալառու
<< ԵՍ ԵՎ ՆԱՅՏՈՒՐ
ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Գ. Նժդեհի 11
<< Ակբա կրեդիտ Ագրիկոլ բանկ >>ՓԲԸ Արագածոտն Մ/Ճ
Հ/Հ h/h 2200433311270000524 ՀՎՀՀ 05204081
Ն.Սահակյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ